ԴԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Աշոտ Հարությունյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Կյանքի 60 տարին բոլորեց ռազմագետ-պատմաբան, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչության պետ, ակտիվ հասարակական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հովսեփի Հարությունյանը։

Նա ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 31-ին, ՀՍՍՀ Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղում, շրջավոր գյուղացու ընտանիքում։ 1930 թ. Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո Աշոտ Հարությունյանն աշխատանքի է անցել Ղափանում՝ որպես դպրոցի դիրեկտոր և պատմության ուսուցիչ։ Նա 1934 թ. կամավոր մեկնել է սովետական բանակ և ծառայել 76-րդ հայկական հրաձգային դիվիզիայում՝ գերազանց ծառայության համար բազմիցս արժանանալով խրախուսանքի։

1936—1941 թթ. Աշոտ Հարությունյանը եղել է Երևանի № 41 դպրոցի դիրեկտոր։ 1939 թ. էքստեռն կարգով ու գերազանց գնահատականներով ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը։ Աշոտ Հարությունյանը 1941 թ. հուլիսից մինչև 1963 թ. հունվարը ծառայել է սովետական բանակում, նախ՝ որպես հրետանային մարտկոցի կոմիսար և ապա՝ դիվիզիայի քաղբաժնի պետ՝ արժանանալով գվարդիայի գնդապետի կոչման։ Գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարում ցուցաբերած ակտիվ մասնակցության և խիզախության համար ճանաչված զինվորականը արժանացել է բազմաթիվ շքանշանների ու մեդալների։ Նրա ցուցաբերած հերոսությունների մասին բազմիցս դրվել է մամուլում։

Սովետական բանակում ծառայելու տարիներին Աշոտ Հարությունյանը անցել է մաքառումներով ու հերոսական դրվագներով լի պայքարի ուղի, միշտ պայքարել հանուն արդարության ու ճշմարտության։ Պատահական չէ, որ Սովետական Միության կրկնակի հերոս, գեներալ-գնդապետ Դրագունսկին նրան բնորոշել է այսպես. «Աշոտ Հարությունյանը անսահմանորեն կոմունիզմի գործին նվիրված ընկեր է, սկզբունքային, ազնիվ, աշխատասեր և ակտիվ կոմունիստ»։

Ա. Հարությունյանը զինվորական ծառայությունը հմտորեն զուգակցելով գիտական գործունեության հետ, 1950 թ. հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա։ Ռազմական արվեստի պատմության հարցերի մեջ խորանալու նպատակով նա 1952—1953 թթ. սովորել և գերազանց դիպլոմով ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից բարձրագույն ակադեմիական կուրսերը։

Սկսած 1944 թ. ռազմագետ-պատմաբանը հանդես է եկել և շարունակում է հանդես գալ Հայրենական մեծ պատերազմի պատմությանը նվիրված զանազան արժեքավոր գիտական հոդվածներով ու հետազոտություններով։ Ուշագրավ են նաև Սարիղամիշի, Ալաշկերտի, Էրզրումի ճակատամարտերին, առաջին համաշխարհային

պատերազմի պատմության պատմագրությանը. ծովակալ Սերբրյակովին, զորավար Անդրանիկին, Սովետական զինված ուժերի մարտական ավանդույթներին և այլ հարցերի նվիրված նրա հետազոտությունները։ 1967 թ. լույս տեսավ Աշոտ Հարությունյանի «Պատերազմի և խաղաղության մի քանի պրոբլեմների մասին» մեծարժեք մենագրությունը։

Բազմավաստակ ռազմագետ-պատմաբանի նախաձիրությունն են առաջին համաշխարհային պատերազմի պատմության ստվերոտ կողմերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը։ Դրա վառ վկայությունն է նրա «Կովկասյան ռազմաճակատը 1914—1917 թթ. և ցարիզմի քաղաքականությունը պատերազմի իրավունքով գրավված շրջաններում» դոկտորական դիսերտացիան՝ պաշտպանված 1967 թ. «Կովկասյան ռազմաճակատը 1914-1917 թթ.» խորագրով օրերս լույս տեսավ այդ աշխատության համառոտ խմբագրությունը (ռուսերեն)։ Այն նվիրված է առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատի ռազմադիվանագիտական պատմությանը։ Գրքում հարուստ աղբյուրագիտական նյութի վրա տրված են Մերձավոր Արևելքում տիրող ռազմաքաղաքական վիճակը պատերազմի նախօրյակին, Սարիղամիշի, Ալաշկերտի, Էրզրումի, Մոսուլի և մյուս ռազմական գործողությունների նկարագրությունն ու վերլուծությունը։ Որոշակի խոսք է ասված ռուսական բանակում Թուրքիայի դեմ կռվող հայկական կամավորական և կանոնավոր զորքերի մարտական ուղու մասին։ Նորահայտ վավերագրերի հիման վրա բացահայտված է ցարական կառավարության և բարձր հրամանատարության միջոցառումների իմաստը տընտեսական-վարչական քաղաքական կյանքի կազմակերպման ուղղությամբ, պատերազմական գործողությունների հետևանքով նվաճած շրջաններում (Արևմտյան Հայաստանում)։ Տըպագրվում է նաև «Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմության մի քանի հարցեր» աշխատությունը։

Շուրջ 10 տարի «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագիրը լույս է տեսնում նրա խմբագրությամբ։

Պատմաբան-ռազմագետի առաջաբանով և խմբագրությամբ են լույս տեսել «Գայլ». «Կըրկընակի հերոս Նելսոն Ստեփանյան». «Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցի պատմությունը» փաստաթղթերի ժողովածուները։ Պատրաստ են տպագրության նրա ղեկավարությամբ կազմված «Ծովակալ Իսակով» և «Ծովակալ Սերբրյակով» փաստաթղթերի ժողովածուները։

Ա. Հարությունյանի եռանդուն ղեկավարության շնորհիվ և գիտա-կազմակերպական ջանքերով Հայաստանի արխիվային ֆոնդերը զգալիորեն հարստացել են, ընդլայնվել են արխիվների գիտա-տեխնիկական հնարավորությունները, ստեղծվել են կինո-ֆոտո-ֆոնո հատուկ արխիվլաբորատորիա՝ իր նորակառույց. շենքով. ինչպես նաև արխիվների շրջանային բաժանմունքներ։ Այդ ամենի շնորհիվ արխիվային գործը Հայաստանում դրվեց բարձր հիմքերի վրա։

Նշանակալի է Աշոտ Հարությունյանի գիտա-մանկավարժական գործունեությունը։ Նա երկար տարիներ դասավանդել է Երևանի բուհերում, իսկ վերջին 10 տարում՝ Երևանի պետական համալսարանում։

Գիտա-մանկավարժական գործունեությանը զուգընթաց Աշոտ Հարությունյանը մեծ ուշադրություն է դարձնում հանրապետության երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը։ ՀՍՍՀ կենտրոնական արխիվում նրա անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ստեղծվել են հայկական ազգային դիվիզիաների պատմության ֆոնդերը, որոնք արտացոլում են մեր ժողովրդի մարտական ավանդույթների պատմությունը։

60-ամյա գիտնականը այժմ էլ լի երիտասարդական ավյունով, շարունակում է գիտա-մանկավարժական կազմակերպական և հասարակական շնորհակալ գործունեությունը՝ իր ուժերն ու կարողությունները ի սպաս դնելով սովետահայ պատմագիտության զարգացման գործում։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ։